Հաստատվում է

Տնօրեն՝ Գ. Աբրահամյան

---------- 2023-2024թթ.

Ստուգված է

Փոխտնօրեն՝ Հ. Գասպարյան

---------- 2023-2024թթ.

ԴԱՍՂԵԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

ԿԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
8-ՐԴ Ա ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ

20239 -2024 ՈՒՍՏԱՐԻ

Tiny Scanner

Դասարանի բնութագիրը

8-րդ ա դասարանն այս ուստարում ունի 27 աշակերտներ, որոնց մեջ կան և հեշտ և դժվար դաստիարակվող երեխաներ: Ընդհանուր առմամբ լավ դասարան է, համերաշխ, առանց անհաշտ մթնոլորտի, սակայն կան նաև դժվարություններ, որոնք հաղթահարելի են, ուղղակի ժամանակ են պահանջում: Միջին մակարդակի սովորում է դասարանի մեծ մասը, չկան գերազանցիկներ, կան 8 հարվածայիններ: Դասարանում գերակշռում են աղջիկները, սակայն տղաներն էլ ունեն իրենց տեղը: Կան շատ շնորհալի աշակերտներ՝ պարողներ, երգողներ, կիթառ նվագողներ, դհոլի մանագետներ, նկարիչներ, սպորտսմեններ: Դասարանն աչքի է ընկնում մարզային և համադպրոցական բազմաթիվ միջոցառումներում, ակտիվ է, նախաձեռնող:Արշակ Ասատրյանը և Եվա Սարգսյանը դպրոցի լավագույն շախմատիստներն են և հաճախ են մասնակցում մրցումների: Տարվա սկզնին այսպիսի մրցույթում Արշակը մարզում գրավեց առաջին տեղը և կգնա հանրապետական մրցաշարի: Շարժուն են, սակայն երբ պետք է, կարող են հանգիստ և համբերատար լինել: Իմ և դասարանի նախորդ տարիների աշխատանքը հետևողական է եղել, կա փոխընմռնում և փոխադարձ հարգանք, սակայն ուսման մեջ չի հաջողվում բեկում մտցնել: :Այս ուստարվա սկզբում դասարան ընդունեցինք նոր աշակերտուհու՝ Գևորգյան Եվային , որը նախկինում սովորել է այս դասարանում: Նրա հետ աշակերտները շատ արագ մերվեցին: Անցյալ ուստարվա վերջում Երևան տեղափոխվեց մեր դասընկերուհի Մարիամը: Առայժմ չկան կոնֆլիկտներ աշակերտների և դասարանում պարապող ուսուցիչների միջև, բոլորը միայն դժգոհ են դասարանի ոչ բավարար սովորելուց: Այս տարի ունենք անգլերենի նոր ուսուցչուհի, որի հետ աշխատանքը կարծում եմ արդյունավետ կլինի: Գոհ եմ նաև դասարանի ծնողկոմիտեի անդամներից և առհասարակ բոլոր ծնողներից: Նախորդ տարիների ընթացքում համարյա ժողովներից չեն բացակայել, ուշադիր են իրենց երեխաների հանդեպ, ունեն հարգալից վերաբերմունք դպրոցի և ուսումնական գործի կազմակերպիչների հանդեպ:

Tiny Scanner

	ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
1	Ուսումնական տարվա և նոր դպրոցի բացման արարողություն.	սեպտեմբեր	Տնօրենություն դասղեկ, ծնողկոմիտեի նախագահ
2.	Աշակերտների հետ զրույց ՝՝ Գիտելիքի օր՝՝ Կազմակերպչական հարցեր՝ ավագի ընտրություն, հերթապահության սահմանում, դասացուցակ և աշակերտների դասավորում ըստ դասարանական հանձնախմբերի.	սեպտեմբեր	դասղեկ
3	Դասագրքերի բաշխում : Զրույց դպրոցական նոր գույքի պահպանման և հանրօգուտ աշխատանքի և մաքուր շրջակա միջավայրի մասին:	սեպտեմբեր	դասղեկ
4	Ծանոթություն դպրոցական կարգապա-հական կանոններին: Ինչպես պետք է պահի իրեն աշակերտը դպրոցում, տանը, փողոցում, հանրային վայրերում:	սեպտեմբեր	դասղեկ
5.	Անկախության տոնին նվիրված և Արցախի անկման հիշատակի միջոցառում մարզային գրադարանի հետ Արտաբույնք գյուղում՝ նվիրված հերոս Նորայրին:	20-ը սեպտեմբեր	Դասղեկ, ծնողկոմիտե և աշակերտներ
6	Զրույց միմյանց հանդեպ վարվելակերպի մասին	սեպտեմբեր	դասղեկ
7		սեպտեմբեր	դասղեկ
8	Մասնակցություն մարզային գրադարանի միջոցառմանը <Հայոց երգի մեծանուն վարպետը՝ Կոմիտաս> թեմայով:	հոկտեմբեր	Մարզային գրադարանավարներ և դասղեկ
9	Ուսուցչի օրվա նշում՝ աշակերտների սցենարով:	հոկտեմբեր	Դասղեկ և ծնողներ
10	Մասնակցություն ՝՝Մեղու՝՝ մրցույթին.	հոկտեմբեր	դասղեկ
11	Տրամաբանական խաղերի կազմակերպում դասարանում:	հոկտեմբեր	դասղեկ
12	Զրույց ընկերասիրության, կարեկցանքի, բարության մասին	հոկտեմբեր	Դասղեկ և հանձնախմբեր

Tiny Scanner

13	Քննարկում <Ինչպե՞ս լինել ավելի կառուցողական>.	նոյեմբեր	դասղեկ
14	Բանավեճ<Սովորելը կարևոր է>	նոյեմբեր	դասղեկ
15	Զրույց՝ կամավորական աշխատանք	նոյեմբեր	դասղեկ
16		նոյեմբեր	դասղեկ
17	<Ի՞նչն է կյանքում ինձ համար արժեքավորը>	դեկտեմբեր	դասղեկ
18	Իմ կատարած լավ գործերը. իմ կարողություններն ու հմտությունները	դեկտեմբեր	դասղեկ
19	Հանդիպում բժշկի հետ <Դեռահասների խնդիրները>. ՝՝Ինչպե՞ս պայքարել վատ սովորությունների դեմ՝՝	դեկտեմբեր	Դասղեկ և մանկաբույժ
20	Ամանորյա դիմակահանդեսի մասնակցություն	դեկտեմբեր	Դասղեկ, ծնողկոմիտե և հանձնախմբեր
	Զ մ ե ռ ա յ ի ն հ ա ն գ ի ս տ		
	2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ		
1	Միասնության գաղափարը մեր ազգի կյանքում: Ինտերակտիվ քննարկում .	հունվար	դասղեկ
2	Զրույց՝՝ Ինչպիսի՞ն պետք է լինի քաղաքացին՝՝:	հունվար	դասղեկ
3	Հայոց բանակի օրվա նշում.	հունվար	Դասղեկ, կազմակերպիչ
4	Դպրոց-ընտանիք –հասարակություն կապի մասին	փետրվար	դասղեկ
5	Տեառնընդառաջի օրվա նշում.	փետրվար	Դասղեկ, կազմակերպիչ
6	<Մայրենին մեր> միջոցառմանը մասնակցություն.	փետրվար	դասղեկ
7	Մասնագիտական կողմնորոշում. ՝՝Ինչ եմ	մարտ	դասղեկ

	ուզում դառնալ՞՞ թեմայով զրույց		
8	Կանանց և աղջիկների միամսյակի նշում	մարտ	դասղեկ, կազմակերպիչ
9	Հաղորդում <Սպորտը և մենք>, Եկեղեցական տոնի նշում՝ Զատիկ	մարտ	Մարզական և մշակութային հանձնախմբեր և դասղեկ
10	Մեր ազգի հերոսական էջերը. Արցախյան հերոսամարտի դասերը:	ապրիլ	դասղեկ, կազմակերպիչ
12	,,Գարնան բույրը ,, համադպրոցական միջոցառման մասնակցություն	ապրիլ	դասղեկ
13	Մեծ եղեռնի մասին տեղեկատվություն	ապրիլ	դասղեկ, պատմության ուսուցչուհի
14	Այցելություն պատկերասրահ	ապրիլ	դասղեկ
15	Արվեստի ժամ, ազատ ընտրություն՝ երգ, պար, ասմունք.	մայիս	դասղեկ
16	Բանավեճ ՞՞Ուժեղ լինել նշանակում է...՞՞	մայիս	դասղեկ
17	Ծնողական ժողովների պարբերական անցկացում.	Տարվա ընթացքում	դասղեկ
18	Ծնողխորհրդի տարեկան հաշվետվություն, ուստարվա ամփոփում.	մայիս	դասղեկ
19	Դասարանի ավագների տարեվերջյան հաշվետվություն:	մայիս	դասղեկ և ավագներ
20	Էքսկուրսիա դեպի հետաքրքիր տեսարժան վայրեր.	մայիսի 25	դասղեկ, աշակերտներ և ծնողներ

Tiny Scanner